ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

Հ. Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, *Երևան, 1980, 274 էջ։*

Հայագիտության մեջ այժմ քիչ են այն թեմաները, որոնք այս կամ այն չափով ուսումնասիրված չեն։ Կարող է խոսք լինել միայն անբավարար ուսումնասիրության, եզրակացությունների ոչ բոլոր դեպքերում համոզիչ լինելու մասին։ Հ. Մելքոնյանի սույն գիրքը պատկանում է այն հետազոտությունների թվին, որոնց վերաբերյալ հայագիտությունը չունի ոչ թե մենագրություն, այլ անգամ հոդված։ Եվ այդ տեսակետից կարելի է պատկերացնել այն դժվարությունները, որոնք կանգնած էին հայ հետազոտողի առջև։ Հ. Մելքոնյանը հաջողությամբ հաղթահարել է դրանք և ներկայացրել ուշագրավ աշխատություն, որ նվիրված է Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից, Աքեմենյան կայսրության վերացումից հետո Միջագետքում, Մեծ և Փոքր Զաբ գետերի միջև ընկած Ադիաբեն անունը կրող երկրամասում կազմակերպված քաղաքական միավորման պատմությանը։ Հեղինակը չի բավարարվել լոկ այդ պետության պատմության հետազոտությամբ, այլև լայն ֆոնի վրա ու անհրաժեշտ խորությամբ շարադրել է և ցույց տվել Ադիաբենի քաղաքական, տնտեսական, եկեղեցական, մշակութային փոխհարաբերությունները Հայաստանի հետ, որ ինքնըստինքյան հայագիտության համար շատ կարևոր է։

Աշխատության ներածության մեջ խոսվում է ավելի ուշ շրջանի աղբյուրներում Ադիաբեն անունով հայտնի երկրի մայրաքաղաքը համարվող Արբելա քաղաքի պատմության մասին։ Հեղինակն այն սկսում է մ. թ. ա. III հազարամյակի վերջում և II հազարամյակի սկզբում այնտեղ հաստատված շուբարեցիների խուրիական ցեղին նվիրված մի ակնարկով, ցույց տալիս, որ դեռևս մ. թ. ա. IX դարում այստեղ գոյություն ուներ Արբելա քաղաք-պետությունը, որի իշխանությունը տարածվում էր նաև իր շրջակայքում ապրող տարբեր ցեղերի վրա։ Ասորեստանյան տիրապետության օրոք, հատկապես մ. թ. ա. VIII—VII դդ. այդ քաղաք-պետությունը իր ծաղկումն էր ապրում. դրան նպաստեց Հրեաստանից և Փյունիկեից այստեղ քշված բազմահազար գերիների բնակեցումը։ Այս շրջանում է, որ սկսում են մեծ դեր խաղալ Իշտար աստվածուհու պաշտամունքը, նրան նվիրված տաճարը և կից աստղադիտարանը, որոնք ոչ միայն պաշտամունքային-մշակութային, դիտական կենտրոններ էին, այլև քաղաքական։ Մ. թ. ա. VIII դարի վերջում Ուրարտուի կազմից անջատված և հայ ժողովրդի կազմավորման մեջ ընդգրկված մի շարք ցեղեր, հեղինակի ենթադրությամբ, հաստատվում են երկու Զաբ գետերի միջև ընկած երկրամասում և դառնում շրջանի բնակչության էթնիկական հիմնական երեք տարրերից մեկը, որը երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում զգալի դեր է խաղում։

Ասորեստանյան պետության անկումից հետո՝ մ. թ. ա. VII դարի վերջում, Արբելան ընկնում է Բաբելոնի, իսկ ավելի ուշ՝ աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո։

Գրքի առաջին մասը բաղկացած է երեք գլխից և բազմաթիվ ենթագլուխներից։ Առաջին գլխում բերված են Ասորեստանի Նինոս թագավորի կողմից Արբելա քաղաքի հիմնադրման մասին Ստրաբոնի, Արրիանոսի գործերում և ասորական աղբյուրներում պահպանված ավանդությունները, ցույց է տրվում դրանց պատմականության աստիճանը։ Անցնելով երկրամասի բնակչության էթնիկական կազմի հարցին, հեղինակը բերում է Ստրաբոնի այն կարևոր վկայությունը, որ Ադիաբենի բնակչության էթնիկական գլխավոր տարրերից մեկը հայերն են եղել։ Հունական ու լատինական և ավելի ուշ շրջանի՝ ասորական աղբյուրների հիման վրա ցույց է տրվում, որ «Ադիաբեն» անունը առաջին անգամ հիշվում է հունա-հռոմեական աղբյուրներում, ուստի առաջացել է Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո ընկած ժամանակաշրջանում։ Այնուհետև Դիոդորոս Սիկիլիացու, Արրիանոսի և անտիկ շրջանի այլ հեղինակների աշխատությունների տվյալների հիման վրա խոսվում է Արբելա

քաղաքի՝ Ալեքսանդր Մակեդոնացու կողմից գրավվելու, նվաճողների՝ երկրում հաստատած դարգ ու կանոնի, կառավարման սիստեմի, Ալեքսանդրի մահից հետո նրա հսկայածավալ պետության մեջ կատարված փոփոխությունների մասին։ Շոշափվում են Սելևկյանների գերիշխանության տակ գտնվող ժողովուրդների, այդ թվում և Ադիաբենի բնակչության բարձրացրած ապստամբությունների, օտարի լուծը թոթափելու և ինքնուրույն պետությունն ստեղծելու հետ առնչվող հարցերը (մ. թ. ա. 123 թ.)։ Մանրամասնորեն ներկայացվում են հայոց թագավոր Տիգրան II-ի նվաճումները, Ադիաբենի պետության հետ նրա ունեցած փոխհարաբերությունները, Ադիաբենը պարթևական գերիշխանության տակ անցնելու պատճառով երկրում հաստատված հայ վերնախավի Հայաստան գաղթելը և այլն։

Հպատակ փոքր ժողովուրդների նկատմամբ պարթևների քաղաքականության վերաբերյալ խոսելիս ցույց է տրվում, որ կրոնի հարցում պարթև վեհապետները քաղաքական նկատառումներով հանդուրժողական դիրք էին բռնել իրենց հպատակ ժողովուրդների նկատմամբ։

Առաջին մասի երկրորդ գլխում, լայնորեն օգտագործելով Հովսեպոս Փլավիոսի և Տակիտոսի տեղեկությունները, հեղինակը շարադրում է Ադիաբենի թագավորական դինաստիաների, նրանց միջև գերիշխող դարձած Արշակունիների արևելյան ճյուղի պատմությունը, բացահայտում Ադիաբենի, Ատրպատականի և Հայաստանի թագավորների արենակցական կապերը։ Այնուհետև պատմվում է Ադիաբենի թագավոր Մոնոբազոսի, նրա կնոջ՝ Հեղինեի և որդու՝ Իզատեսի (I դար), Հեղինեի և Իզատեսի ընդունած նոր կրոնի (Հեղինակի ենթադրությամբ՝ քրիստոնեության), նրանց իշխանության օրոք Ադիաբենի և Հրեաստանի, ապա և պարթևների պետության փոխհարաբերությունների մասին։ Այս գլխում վերլուծվում են նաև Ադիաբենի թագավորության ներսում Իզատեսի և նրա եղբայր Մոնոբազոսի միջև ծայր առած գահակալական պայքարը, այդ պայքարում պարթև արքա Վաղարշ I-ի գրաված դիրքի, Իզատեսի մահվան և Ադիաբենի գահը Մոնոբազոսի ձեռքն անցնելու հետ կապված խնդիրները։ Հատուկ ուսումնասիրված են Արևելքում Հռոմեական կայսրության նվաճողական քաղաքականության դեմ պարթևների, հայերի և Ադիաբենի բնակիչների միացյալ պայքարի հարցը, Հռոմի պարտությունը, պարթևական Իրանի և Հռոմի միջև Հռանդեայի 63 թ. հաշտության պայմանագիրը, Տրդատ I-ի գահակալությունը Հայաստանում։

Առաջին մասի երրորդ գլուխը մի ակնարկ է՝ նվիրված Ադիաբենից Հայաստան գաղթած մի քանի նախարարական ընտանիքների, որոնք պարթևա-հայկական զինակցության ժամանակ օգնել էին հայերին և հանգամանքների բերումով մնացել Հայաստանում։ Նրանց թվում կային և Ադիաբենում բնակվող հայեր։ Սրանցից է հեղինակը համարում Մովսես Խորենացու հիշատակած Շամբատ Բագարատին, որ Տրդատ I-ի արքունիքում ստանձնեց թագակապ-թագադիր ասպետի պարտականությունները, ապա և Խորխորունիներին, Գնթունիներին և այլոց։

Աշխատության երկրորդ մասը բաղկացած է երկու գլխից («Ադիաբենը պարսկա-հռոմեական տիրապետության ներքո» և «Ադիաբենը պարսիկներից նշանակված կառավարիչների («մոգպետների») իշխանության ներքո»)։ Այստեղ նախ և առաջ խոսվում է Տրայանոս կայսեր (98—117 թթ.) արևելյան արշավանքի մասին, երբ Հռոմը 114 թ. տիրանում է Հայաստանին, իսկ 116 թ.՝ Ադիաբենին, վերածելով այն սովորական նահանգի՝ Ասորեստան անունով, ապա բնութագրվում է Տրայանոսին հաջորդած Հադրիանոս կայսեր (117—138 թթ.)՝ նվաճված երկրների հանդեպ որդեգրած նոր քաղաքականությունը, երբ նա ստիպված է լինում հրաժարվել նրանց վրա ունեցած իր գերիշխանությունից։ Վերականգնվում են Հայաստանի, Օսրոյենի թագավորությունները։ Ինչ վերաբերում է Ադիաբենին, ապա երկրից Հռոմեական զորքերի դուրս գալուց հետո այն ընկնում է Պարթևական կայսրության գերիշխանության ներքո։ 166 թ. Հռոմեա-պարթևական հաշտության հետևանքով պարթևական տիրապետությունը Ադիաբենում աստիճանաբար վերանում է և երկրում վերականգնվում է թագավորական իշխանությունը։ Երբ 226 թ. Պարսկաստանում իշխանության գլուխ է անցնում Սասանյան հարստությունը, Ադիաբենի թագավորը բարեկամական կապեր է հաստատում նրա հետ, բայց երկիրն ի վերջո ընկնում է պարսից գերիշխանության ներքո և Ադիաբենի թագավորությունը վերանում է։ Ադիաբենում սկսում են իշխել Սասանյանների նշանակած կառավարիչներն ու մարզպանները, որոնք ասորական աղբյուրներում կոչված են «մոգպետներ»։ Սկզբնական շրջանում պարսիկները հանդուրժողական վերաբերմունք ունեին Ադիաբենի քրիստոնյաների նկատմամբ, բայց շուտով վճռում են զրադաշտականությունը տարածել։ Պարսկական գերիշխանությունը Ադիաբենում պատճառ դարձավ ապստամբական շարժումների բռնկման։

Աշխատության երրորդ մասում ի մի են բերված սկզբնաղբյուրների տվյալները II դարի կեսին Ադիաբենում քրիստոնեական առաջին համայնքների կազմավորման վերաբերյալ։ Սկզբնապես նոր վարդապետության կրողները Ադիաբինի հրեաներն էին։ Քրիստոնեությունն Ադիաբենում համեմատաբար նպաստավոր պայմաններում էր Սասանյանների հարստության հիմնադրման սկզբնական շրջանում, երբ նոր կրոնի տարածման համար պայմաններ էին ստեղծվել նաև Պարսկաստանում։ Այդ գործում կարևոր դեր խաղացին Ադիաբենից Պարսկաստան գնացած քրիստոնյա քարոզիչները։ Սակայն երբ Արևելահռոմեական կայսրության մեջ քրիստոնեությունը ճանաչվեց ու օրինականացվեց, իսկ այնուհետև նաև պետական կրոն դարձավ, Սասանյանները, քրիստոնյաներին համարելով կայսրության գործակալներ և օտար ու թշնամական տարր, սկսեցին նրանց հալածանքը, հատկապես Շապուհ II արքայի ժամանակ։ Բայց դա երկար չտևեց։ Պարսիկները շուտով հասկացան, որ Բյուզանդական կայսրությունից դավանաբանական առումով անջատված միաբնակներն ու նեստորականները կարող են պարսկական պետությանն օգուտ տալ։ Այդ նպատակով ոչ միայն դադարեցվեցին հալածանքները, այլև նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Տիզբոնի կաթողիկոսության գործունեության համար, որը սկսեց հանդես գալ որպես պարսկական տիրապետության տակ գտնվող ողջ ասորի աշխարհի հոգևոր կենտրոնը և իր հոգևոր գերիշխանությունը տարածեց նաև Ադիաբենի եկեղեցու վրա։ Այս հարցին է նվիրված աշխատության երրորդ մասի երկրորդ գլուխը, որտեղ խոսվում է Տիզբոնի կաթողիկոսությանը ենթակա մի շարք թեմերի (մետրապոլիտությունների), այդ թվում և Արբելայի մետրապոլիտության և նրանց ենթակա եպիսկոպոսական աթոռների մասին։ Այստեղ արծարծվում է նաև 363 թ. հայկական պետությունից անջատված և Ադիաբենի կազմի մեջ մտած հայկական շրջանների (Ադամակերտ, Դասն կամ Դասընտրե, Մահկերտուն), Ադիաբենի մետրապոլիտությանը նրանց ենթակա դառնալու, Ադիաբենի եկեղեցական առանձին թեմերի հետ հայ եկեղեցու ունեցած փոխհարաբերությունների հարցը։

Աշխատությունը զերծ չէ թերություններից։ Միշտ չէ, որ գլուխների վերնագրերը հաջողված են։ Հաճախ այս կամ այն վերնագրի «տարողությունը» շատ ավելի փոքր է, քան բովանդակած նյութը։ Օրինակ, առաջին մասի առաջին գլուխը վերնագրված է՝ «Ադիաբենը մինչև Սելևկյանների իշխանության հաստատումը»։ Թվում է, թե խոսք է լինելու սոսկ Սելևկյանների տիրապետությանը նախորդող շրջանի վերաբերյալ, այնինչ տվյալ գլխի 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթագլուխներում խոսվում է նաև Ադիաբենի մասին ինչպես սելևկյան, այնպես էլ պարթևական գերիշխանության տակ գտնվելու ժամանակաշրջանում, Ադիաբենի անկախ թագավորության մասին մ. թ. ա. II—I դդ.։ Երկրորդ մասի երկրորդ գլխում՝ «Ադիաբենը պարսիկներից նշանակված կառավարիչների («մոգպետների») իշխանության ներքո», մանրամասն շարադրված է պարսիկների տիրապետությանը նախորդող պարթևական տիրապետության շրջանի, Ադիաբենի թագավորական իշխանության վերականգնման, II դարի վերջերից սկսած Հռոմեական կայսրության վարած արևելյան քաղաքականության պատմությունը և այլն։

Համոզիչ չէ հեղինակի այն բացատրությունը, թե իբր հայկական աղբյուրներում նկատվող լռությունը Ադիաբեն երկրի մասին պայմանավորված է Ադիաբենի՝ նեստորական եկեղեցու միջնաբերդը, ինչպես և աղանդավորական շարժումների կարևոր օջախներից մեկը լինելու հանգամանքով, որ իբր հայ հեղինակները չեն հիշատակել Ադիաբենը, որպեսզի «չպղտորեն» հավատացյալների հոգին։

Հեղինակը քննում է Ադիաբեն երկրի անվան «առաջացման» խնդիրը, բայց խոսքը «առաջացմանը» չի վերաբերում, այլ աղբյուրներում առաջին անգամ դրա հիշատակմանը։ Երկրամասի անվան առաջացման պրոցեսը մեզ հայտնի չէ։

Հեղինակը ներկայացնում է հպատակ ժողովուրդների նկատմամբ պարթևների վարած «արտաքին» քաղաքականությունը։ Եթե այս կամ այն երկրամասը մտել է պարթևական պետության կազմի մեջ, ապա պարթևների քաղաքականությունը նրանց նկատմամբ չի կարելի անվանել «արտաքին» քաղաքականություն, այլ «ներքին» կամ պարզապես՝ «քաղաքականություն»։

Լավ կլիներ, եթե գրքին կցված լիներ Ադիաբենի աշխարհագրական քարտեզը։

Հ. Գ. Մելքոնյանի աշխատությունը բաղում տարիների մեղվաջան, մանրակրկիտ հետազոտության արդյունք է և արժանի է բարձր գնահատականի։

Պատմ.։ գիտ. դոկտոր Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ